

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ԾՈՒՑԻ ՀԱՅՈՅ  
ՔԱՂՔԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՕՐԲՈՒ

ՀՏՇ. 941 (479.25):325  
Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)  
Ը 973

Գիտաժողովը նվիրվում է  
Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանառու Խմբագիր՝  
**Արտակ Մաղալյան**

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

**Արամ Սիմոնյան** – ԵՊՀ ռեկտոր, **Վաղիմիք Բարխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բարեկեն Հարուրյունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Արարատ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Ը 973 ԾՈՒԾԻՆ ՀԱՅՈՑ ՔԸՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ. Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր. – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն, 2007

ԱՆԱՍՏՐԵԱՆ  
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

**ԴԱՒԹԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԻ  
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒԾԻՈՒՄ**

2008 թվականին լրանում է «Անդրկովկասի կոնսերվատորիայի»՝ Շուշվա երաժշտական միջավայրի ծնունդ, ընիկ շուշեցի, ՅևԱՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945), վաստակավոր ուսուցիչ (1944), կոմպոզիտոր, գողտրիկ երգերի ու ռոմանսների, խմբերգերի, բազմաթիվ մանկական երգերի և մանկական օպերաների, նվազախմբային ու դաշնամուրային ստեղծագործությունների, դրամաների համար գրված երաժտության հեղինակ, խմբավար, երգիչ, մանկավարժ, Բարումի (1922) և Լենինականի (1924) երաժշտական ստուդիաների հիմնադիր, իր ստեղծագործությամբ և ակտիվ գործունեությամբ հայ պրոֆեսիոնալ երաժշտության և խմբերգային արվեստի զարգացման մեջ զգալի ավանդ ներդրած Ղանիել Ղազարյանի (1883-1958) ծննդյան 125-ամյա հոբելյանն ու մահվան կեսդարյա տարելիցը:

Ղայրենական երաժշտության պատմության մեջ այդ նշանակալի հոբելյանին նվիրված հիմնարար մենագրության ստեղծմանը ծեռնամուխ լինելով և, հետևաբար, Ղ. Ղազարյանի ստեղծագործական դիմանկարը մեկ հոդվածի շրջանակներում ներկայացնելու նպատակ չունենալով՝ փորձենք ուրվագծել հայ երաժշտարվեստի երախտավորի կյանքի ու գործունեության այն շրջանները, որոնք առնչվում են հայրենի Շուշի քաղաքի հետ:

Ղանիել Ղազարյանը<sup>1</sup> ծնվել է 1883 թ. մայիսի 17-ին<sup>2</sup> Շու-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Տոնիկյան, Ղանիել Ղազարյան, Ե., 1977, էջ 70:

<sup>2</sup> Ղ. Ղազարյանի մասին առկա գրականության մեջ շրջանառվում է նաև մայիսի 5-ը (տե՛ս Ա. Տոնիկյանի աշխատությունը և Ա. Ծեկունցի հոդվածները):

շիում, ուսուցիչ, դուրեկան ծայնով և նուրբ լսողությամբ օժտված, երգ-երաժշտության մեջ սիրահար, Շուշիի թեմական դպրոցի երգ-երաժշտության ուսուցիչ Տեր-Գարեգին քահանա Յովհաննիսյանից<sup>3</sup> հայկական ծայնագրությունը սովորած Ավագի ընտանիքում, որի տոհմը՝ «Ասլը», սերում էր Լեռնային Ղարաբաղի Ննջի գյուղից: Իր լավ ծայնի և հայկական ծայնագրության իմացության շնորհիվ Ավագը հաճախակի հանդես է եկել որպես դպիր:

Մայրը՝ Մանուշակը, նույնպես լավ ծայն ուներ և հարմոն էր նվագում: Երեխան ժառանգում է իր ծնողների երաժշտական ընդունակությունները: Յոթ տարեկանում Դանիելն արդեն վարժ սրինգ էր նվագում, իսկ մի քանի տարի անց՝ ջութակ, նաև թառ: Ուշագրավ է այն փաստը, որ Դանիելենց բազմանդամ ընտանիքում երգում էին բոլորը. բոլորն էլ ունեին լավ ծայն, նաև նվագում էին: Եվ պատահական չէ, որ Դանիելի քույրը՝ Անահիտ Ղազարյանը, դարձավ երգչուիի և երաժշտություն էր դասավանդում Թթվիսիի երաժշտական ուսումնարանում:

Երաժշտության սիրահար Ավագը, տեսնելով որդու հրաշալի ծայնն ու երաժշտական ծիրքը, որոշում է, որ որդին պիտի քահանա դառնա (հետաքրքիր գուգադիպությամբ ժամանակին ծիշտ այդպես էր որոշել նաև Քրիստություն Կարա-Մուրգայի հայրը): Սակայն մայրն առարկում է, որ իր զավակը հոգևորական դառնա:

Դայրը որոշում է երաժշտական բացարիկ ընդունակություններով օժտված զավակին տալ Շուշիա թեմական դպրոցը, որտեղ երգ-երաժշտության դասավանդումը բարձր մակարդակի վրա էր, իսկ դպրոցի երգեցիկ խումբը հաճախ էր համերգ-

<sup>3</sup> Տեր-Գարեգին քահանա Յովհաննիսյանը հայկական ծայնագրությունը սովորել էր Էջմիածնում, Նիկողայոս Թաշճյանի մոտ, որն էջմիածնում էր գտնվում Գևորգ Կաթողիկոսի հրավերով՝ «Շարակնոցը», «Պատարագն» ու «Ժամագիրքը» նոտագրելու նպատակով:

ներով հանդես գալիս՝ կատարելով ժողովրդական և հայրենասիրական երգեր:

Շուշիա թեմական վեցդասյա դպրոցում երաժշտության դասընթացը տևում էր վեց տարի, որից առաջին երեք տարիների ընթացքում աշակերտները սովորում էին երգեցողություն, իսկ հաջորդ երեք տարիներին յուրացնում էին հայկական նոր ծայնագրությունն ու երգը: Դպրոցի շրջանավարտները կատարելապես տիրապետում էին հայկական ծայնագրությանն ու ազատ թելադրություններ գրում:

Դժվար է գերազնահատել Շուշիա թեմական դպրոցի դերը հայ երաժշտության նվիրյալների դաստիարակման գործում: Շուշիա թեմական դպրոցն, ըստ էության, մեկն էր այդ ժամանակաշրջանում հայ երաժշտական իրականության մեջ գործող երեք կենտրոններից՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կողմքին, որտեղ խիստ կարևորվում էր երգ-երաժշտության դասավանդման բարձր մակարդակի ապահովումը, որակյալ երաժշտական կադրերի պատրաստումը: Այստեղ գործում էին երգեցիկ խմբեր, որոնք հանդես էին գալիս համերգներով: Այս կրթօջախներում են որպես երաժիշտներ ծևավորվել Մակար Եկմայանը, Կոմիտասը, Սպիրիդոն Մելիքյանը, Գրիգոր Սյունին, Ազատ Մանուկյանը, Անտոն Մայիլյանը, Մուշեղ Աղայանը, Կարո Զաքարյանը, Միքայել Միրզոյանը, Արմենակ Շահմուրադյանը, Տիգրան Նալբանդյանը և այլք: Նրանց շարքում է և Դանիել Ղազարյանը, ով որպես երաժիշտ մկրտվելով Շուշիա թեմական դպրոցում, ընդգրկվելով Կարա-Մուրգայի, Գրիգոր Սյունիի ու Ստեփան Դեմուրյանի երգեցիկ խմբերում և շարունակելով երաժշտական մասնագիտական կրթությունը Բաքվում ու Թիֆլիսում, հետագայում շուրջ կես դար ծառայեց հայ երաժշտական մշակույթի առաջնաբացին որպես կոմպոզիտոր, մանկավարժ, խմբավար, հասարակական գործիչ ու նվաճեց հիրավի համաժողովրդական մեր ու ճանաչում:

Եվ այսպես, 1892 թ. Շուշվա Մարիամյան և թեմական դպրոցներում որպես երաժշտության ուսուցիչ աշխատանքի է հրավիրվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, քանամյա Ստեփան Ղենուրյանը (1872-1934): Շուշիում նա աշխատում է մինչև 1895 թվականը, ապա ընդմիջումներով՝ մինչև 1917 թվականը, մեծապես նպաստելով հայ երգի տարածման գործին: Կարծ ժամանակ անց Ստեփան Ղենուրյանը դառնում է Շուշվա աշակերտության ամենասիրելի ուսուցիչը: «Շատերը սիրեցին նրան ու նրա առարկան, – հետագայում իր ուսուցչի մասին կգրի նրա երախտապարտ ու արժանավոր սանը՝ Ղանիել Ղազարյանը, – եվ եթե թեմական դպրոցը տվեց քազմարիվ գրագետ երաժշտասերներ, որոնք շնորհակալ գործունեություն ծավալեցին Ղարաբաղում և այլուր, ապա դրա համար նախ և առաջ պարտական ենք Ստեփան Ղենուրյանին»<sup>4</sup>: Բախտորոշ էր նրանց հանդիպումը Ղանիելի համար: Ահա այստեղ էլ վճռվում է երաժիշտ դառնալու նրա ճակատագիրը: Եվ պատահական չէ, որ հետագայում նա, հետևելով իր ուսուցչի՝ Ղենուրյանի օրինակին, պիտի երգեցիկ խմբեր կազմեր ու համերգներով հանդես գար տարբեր հայաշատ քաղաքներում:

Ղարոցական տարիներին ի հայտ են գալիս Ղանիելի երաժշտական բացարիկ ընդունակությունները. նա ակտիվութեն մասնակցում է Ստեփան Ղենուրյանի կազմակերպած քառաձայն երգեցիկ խմբին, որը տոն օրերին երգում էր Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում, իսկ սովորական կիրակիների պատարագներին Ղանիելն իր հրաշալի ծայնով կատարում էր սոլոները և հաճախակի ելույթ ունենում դպրոցական տարբեր հանդեսներում:

Շուտով Դ. Ղազարյանը հարկադրված ընդհատում է ուսումնառությունը և քազմանդամ ընտանիքի հոգսերը հոգալու նպատակով գրադպում կոշկակարությամբ՝ օգնելով հորն

ու ավագ եղբորը: Շուրջ վեց տարի տևած արհեստավորի գործունեության ընթացքում անգամ շնորհաշատ պատանին շարունակում էր համագործակցել Ստեփան Ղենուրյանի հետ, երգում էր նրա ղեկավարած երգեցիկ խմբում, մեներգում հանդեսներին ու համերգներին:

Շուշիում անցկացրած իր պատանեկության տարիներին Ղանիել Ղազարյանին բախտ է վիճակվում շփել անվանի երաժշտների հետ: Այդ տարիներին Շուշիում երաժշտական կյանքը շատ ակտիվ էր, հաճախակի էին համերգներ կազմակերպում: Այսպես, 1894-ին Շուշի է ժամանում Քրիստոնու Կարա-Սուլրզան, երգախումբ կազմում և համերգներով հանդես գալիս ժողովրդական և հոգևոր երգերի կատարմամբ: Երգեցիկ խմբի համերգներին ակտիվորեն մասնակցում է նաև Ղանիելը: Նշենք, որ այդ երգախմբում էր ընդգրկվել նաև հետագայում հայ մեծ քանդակագործ, այդ ժամանակ տակավին 13-ամյա Շակոր Գյուրջյանը<sup>5</sup>: Անտարակույս, Կարա-Սուլրզայի համերգները մեծ տպավորություն են թողնում պատանու վրա: Շետո, տարիներ անց, 1912-ի ապրիլի 8-ին Կաղզվանի հայկական դպրոցի դահլիճում Ղանիել Ղազարյանի ղեկավարած աշակերտական երգեցիկ խումբը Կարա-Սուլրզայի մահվան 10-րդ տարելիցից կապակցությամբ պիտի հանդես գար համերգով, որի ծրագրում ընդգրկված էին Կարա-Սուլրզայի խմբերգերը:

1895-ին, ավարտելով Եջմիածնի Գևորգյան ծեմարանը, հայրենի Շուշի է վերադառնում Գրիգոր Սյունին, կազմակերպում երգախմբը և հանդես գալիս իր քազմաձայնած ժողովրդական երգերից կազմված անդրանիկ համերգով:

1901-ին տեղի է ունենում Ք. Կարա-Սուլրզայի հաջորդ այցելությունը Շուշի. 1901 թ. մայիսի 20-ին նրա կազմակեր-

<sup>4</sup> Տե՛ս Ա. Աղասյան, Շուշեցի մեծ քանդակագործ (Յ. Գյուրջյանի ծննդյան 125-ամյակի առթիվ), Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողովի գեկուցումների ժողովածու, Ե., 2007, էջ 254:

<sup>5</sup> Ա. Տոնիկյան, նշվ. աշխ., էջ 9:

պած և ղեկավարած Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգն էր, որին անդրադառնում է «Մշակը» 1901 թ. մայիսի 10-ի N 100-ում: Շուշիի Խանդամիրյան թատրոնի դահլիճում հունիսի 5-ին, 12-ին և 20-ին տեղի են ունենում 70 հոգուց բաղկացած սիրողական քառաձայն երգեցիկ խմբի համերգները, որոնց մասին պատմում են «Մշակի» հունիսի 12-ի, 19-ի և հուլիսի 3-ի համարներում տպագրված նյութերը<sup>6</sup>: Իր Շուշի համերգաշրջանը Կարա-Սուլզան եգուափակում է հայկական սիրողական երգեցիկ խմբի հուլիսի 22-ի համերգով, որի ծրագրում տեղ էին գտել բացառապես ժողովրդական երգերի կատարումները<sup>7</sup>:

Շուշիում երաժշտական կյանքը հատկապես աշխուժանում էր ամռան ամիսներին, երբ հանգստանալու նպատակով Շուշի էին վերադառնում տարբեր կրթօջախներում սովորող և տարբեր վայրերում աշխատող շուշեցի երաժիշտներն ու կազմակերպում համերգներ: Այսպես, Մոսկվայի կոնսերվատորիայի ուսանող, վաղամեռիկ Եղիշե Բաղդասարյանը, վերադառնուվ իր ծննդավայրը, կազմակերպում է երգեցիկ խումբ, ստեղծում Շուշիում ժողովրդական գործիքների առաջին անսամբլը, մասնակցում տարբեր համերգների ու հանդեսների՝ մեծ հետաքրքրություն առաջացնելով ունկնդիրների շրջանում: 1901-ի օգոստոսի 1-ին Շուշիի Խանդամիրյան թատրոնում Եղիշե Բաղդասարյանի ղեկավարությամբ Ելույթ է ունենում արևելյան նվագախումբը: Համերգին մասնակցում են երգեցիկ խումբը, երգիչներ Ա. Սելքումյանը, Ե. Տեր-Միքայելյանը, Ս. Սարգսյանը, ջութակահար Վ. Միրզոյանը, դաշնակահրուիկ Ա. Գալամյանը, քամանչահար Ա. Մելիք-Շահնազարյանը: Ծրագրում ընդգրկված էին Գ. Կազաչենկոյի, Մ. Եկմալյանի, Ե. Բաղդասարյանի, Ս. Ղենուրյանի, Ալ. Սպենդիարյանի ստեղ-

<sup>6</sup> Ռ. Մազմանյան, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901–1910, Ե., 2006, էջ 30–31:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 32–33:

ժագործությունները: Դաշնամուրի նվագամասը կատարում է Ե. Բաղդասարյանը<sup>8</sup>:

1902-ի հուլիսի 3-ին Շուշիում տեղի է ունենում երգիչ, քնարադրամատիկ տենոր Արշակ Կոստանյանի (1865–1920) համերգը, իսկ օգոստոսի 11-ին Շուշիի Խանդամիրյան թատրոնի դահլիճում Ելույթ են ունենում քառաձայն երգեցիկ խումբը և արևելյան նվագախումբը՝ Եղիշե Բաղդասարյանի ղեկավարությամբ: Նույն դահլիճում օգոստոսի 21-ին երգիչ Ստեփան Բարխուդարյանի համերգի ծրագրում տեղ են գտնում հայկական ժողովրդական երգեր՝ «Պաղ աղբյուրի մոտ», «Լորիկ», «Սիրուիս», թեզ համար», «Կռունկ», նաև՝ Չայկովսկի<sup>9</sup>:

1903-ի ապրիլի 13-ին Խանդամիրյան թատրոնում Շուշիի թեմական դպրոցի երգեցիկ խմբի համերգն է Ստեփան Ղենուրյանի ղեկավարությամբ: Ծրագրում՝ «Բամփ որոտան», «Գյուլում ջան», «Սիրո երգ», «Արաքսի արտասուլը», «Ջան մարալ», «Եղսո ջան», «Ջամեստ աղջիկ», «Ջաբրան», «Լուեց, ամպերը», «Ջորովել», «Ահա հրեշտակ», ժողովրդական երգեր<sup>10</sup>: Իսկ հուլիսի 4-ին և 11-ին Շուշիում կազմակերպվում են Ք. Կարա-Սուլզանի հիշատակին նվիրված համերգներ: Ելույթ է ունենում երգեցիկ խումբը՝ Պ. Կարա-Սուլզանի ղեկավարությամբ<sup>11</sup>:

Հուլիսի 31-ին Շուշիում կայանում է արդեն Պետերբուրգի կոնսերվատորիայի ուսանող, կոմպոզիտոր Գրիգոր Միրզայանի համերգը<sup>12</sup>:

Օգոստոսի 3-ին Ստեփան Ղենուրյանի ղեկավարությամբ տեղի է ունենում Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը, որի ծրագրում ներառված էին հայկական ժողովրդական «Ջան գյուլում», «Ջաբրան», «Եղսո ջան», «Ջան, մարալ

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 50–51:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>12</sup> Նույն տեղում:

ջան» երգերը, «Ծիծեռնակներ» վրացական երգը, Շուրեստի սերենադը, Չայկովսկու ռոմանսերից մեկը<sup>13</sup>: Իսկ 1904-ի հուլիսի 1-ին շուշեցիներն ունկնդրում են երգիչ Արշակ Կոստանյանի համերգը, որի ընթացքում հնչում են հայկական և ռուսական երգեր<sup>14</sup>:

«Մշակը» 1907 թ. ապրիլի 10-ի N 75-ում «Ուսանողական երեկույթ – ներկայացում Շուշիում» վերնագրով հոդվածում անդրադառնում է 1907-ի մարտի 31-ին Շուշիի 90 հայ աշակերտներից բաղկացած երգեցիկ խմբի համերգին՝ ուսուցիչ Դարություն Սելիքյանի ղեկավարությամբ, որի ժրագրում տեղ է են գտել Կոմիտասի «Ալագյազ», «Սոնա յար», «Խումար պառկե», ք. Կարա-Մուրզայի «Վարդ կոշիկ» և Գր. Միրզայանի «Սարեն կուգա» խմբերգերը<sup>15</sup>:

Քետագայում իր որդուն հասցեագրած նամակում Ղանիել Ղազարյանն այդ տարիների մասին կգրի. «Բարի նախանձը կրծում էր իմ հոգին, և ես դժվար ճանապարհներով, իմ սեփական ուժերով, ամենատանջալից միջոցներով ձգտել եմ դեպի վեր, դեպի գեղեցիկը, դեպի կուլտուրան: Չեմ վայելել գուրգուրանք, հովանավորություն, չեմ ժառանգել հարստություն, չեմ ստացել հարազատների կողմից անհրաժեշտ օժանդակություն, սակայն իմ ցանկությունների իրագործանք հասնելու պատճառը եղել է իմ բարի սիրտը, իմ աննախանձ հոգին, ծով համբերությունը, իմ ժրաջան աշխատանքը և ամենածիշտ մոտեցումը կյանքի այս կամ այն երևույթներին»<sup>16</sup>:

Ահավասիկ վեցամյա ընդհատված կրթությունից հետո Ստեփան Ղեմուրյանի, Գրիգոր Սյունիի և այլոց խորհրդով Ռ. Ղազարյանը 1907-ին հեռանում է Շուշից և երաժշտական կրթություն ստանալու նպատակով մեկնում Բաքու: Նա ընդունվում է Բաքվի երաժշտական ուսումնարանի վոկալ բա-

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 126:

<sup>16</sup> Ա. Տոմիկյան, նշվ. աշխ., էջ 14:

ժինը, զուգահեռաբար հաճախում Բաքվի բանվորական գիշերային ինստիտուտի ռուսական և օտար լեզուների ֆակուլտետները՝ ցուցաբերելով բարձր առաջադիմություն: Ղազարյանն այստեղ կազմակերպում է իր անդրանիկ երգեցիկ խումբը՝ բաղկացած բանվորներից, և ելույթներ կազմակերպում Բաքվում, Բալախանում և այլուր: Ուսումնական տարին ավարտելուն պես Ղազարյանը վերադառնում է հայրենի Շուշի և իր ընկերների հետ մասնակցում այստեղ կազմակերպվող երաժշտական միջոցառումներին: 1908-ի աշնանը նա մեկնում է Թիֆլիս, որտեղ էլ սկիզբ է առնում նրա երաժշտական բեղուն գործունեությունը: Այստեղ նա ստանում է իր երաժշտական բարձրագույն մասնագիտական կրթությունը՝ ուսանելով կոնսերվատորիայի վոկալ բաժնում, ակտիվ համագործակցում Ունանոս Սելիքյանի և Ազատ Մանուկյանի հետ՝ «Երաժշտական լիգայի» կայացման գործում:

Ղանիել Ղազարյանը կրկին ծննդավայր պիտի վերադառնար միայն 1914-ին: Ի դեպ, Ղ. Ղազարյանի մասին իր հոդվածներում Արևադի Շեկունցը գրում է. «1913 թ. Ղ. Ղազարյանը իր մտերիմ ընկերոջ՝ կոմպոզիտոր Ե. Սարդարյանի (1884–1977) հետ համերգներ է կազմակերպում Շուշի քաղաքում: Իր առաջին այցը ծննդավայր կոմպոզիտոր խմբավարին ստեղծագործական նոր լիցք է հաղորդում և ոգևորում հետագա աշխատանքների համար»<sup>17</sup>: Նույն կարծիքին է նաև Արտակ Տոնիկյանը: Սակայն ժամանակի մամուլի<sup>18</sup> վկայության համաձայն՝ Ղ. Ղազարյանի ու Երվանդ Սարդարյանի ղեկավարությամբ երգեցիկ խումբը Շուշիում համերգներ է տվել ոչ թե 1913-ին, այլ 1914 թ. հուլիսի 4-ին և 6-ին<sup>19</sup>.

<sup>17</sup> Տես Ա. Շեկունց, Ղայ խմբավար կոմպոզիտորները, Ե., 1986, էջ 62, Ա. Շեկունց, Ղարաբաղի անվանի հայ երաժշտները, Կրթությունը և գիտությունը Արցախում, 2005, 3–4, էջ 109:

<sup>18</sup> Տես «Մշակ», 1914, 13 հուլիսի, N 152, «Յորիզոն», Թիֆլիս, 1914, N 151:

<sup>19</sup> Տես Ռ. Մազմանյան, Ղայ երաժշտական կյանքի տարեգործություն, 1911–1920, ՂՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ, ծեռագիր, էջ 338:

Երիտասարդները Շուշվա թեմական և Մարիամյան օրիողաց միջնակարգ դպրոցների աշակերտներից և սիրողներից կազմակերպում են երգեցիկ խումբ: Նրանց մեծապես աջակցում է Ստեփան Դեմուրյանը, որն այդ տարիներին աշխատում էր Շուշիում: Ընդ որում պահպանվել են տեղեկություններ առ այն, որ համերգները տեղի են ունեցել Շուշիի ամառային ժողովարանի դահլիճում: Բավական հարուստ է եղել երգացանկը՝ Գրիգոր Միրզայան, Անուշավան Տեր-Ղևոնյան, Ստեփան Դեմուրյան, Դանիել Ղազարյան, Արմեն Տիգրանյան, Տիգրան Չուխածյան, ինչպես նաև Սոնյուշկո, Մասնեց: Դամերգները շերմ ընդունելության են արժանանում և ստեղծագործական նոր լիցք հաղորդում Դանիել Ղազարյանին:

Այդ համերգներին են անդրադարձել «Մշակը» 1914-ի հուլիսի 13-ի համարում՝ «Գավառական համերգ» վերտառությամբ հոդվածում, և «Հորիզոնը»:

Ի դեպ, Դ. Ղազարյանի ու կոմպոզիտոր և խմբավար, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, վաստակավոր ուսուցիչ Երվանդ Սարդարյանի համագործակցությունը տևական էր ու արգասաքեր: Շուշվա համերգներից մեկ տարի անց՝ 1915 թ. փետրվարի 10-ին, Դ. Ղազարյանի և Ե. Սարդարյանի դեկավարած քառաձայն երգեցիկ խումբը հանդես է գալիս Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում, իսկ մարտի 23-ին՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ապրիլի 9-ին նրանց դեկավարած խառը երգեցիկ խմբի համերգն էր Թիֆլիսի առևտրականների ակումբում, իսկ մայիսի 7-ին և 13-ին՝ Թիֆլիսի Յավլաբարի հասարակական ակումբում:

Դանիել Ղազարյանը երկորոր ու վերջին այցելությունը հարազատ Շուշի կատարում է 1950-ականների կեսերին՝ երկարատև ընդմիջումից հետո: Քրոջ՝ Աշխենի ընկերակցությամբ հայրենի Շուշի է այցելում արդեն անվանի կոմպոզիտորը, որի ստեղծագործությունները՝ երգերը, ռոմանները, մանկական երգերը, լայնորեն տարածվել էին իր ծննդավայրում: Հայրենիքը նրան ընդունում է ըստ արժանվուն: Նա

ներկա է գտնվում Ստեփանակերտի պետական թատրոնում: Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» դրամայի ներկայացմանը: Դրամայի համար երաժշտությունը Դ. Ղազարյանը գրել էր դեռևս 1916 թվականին: Ներկայացումից առաջ թատրոնի գլխավոր ռեժիսոր Կարո Ալվարյանը ներկայացնում է կոնյակութորի կյանքն ու գործունեությունը: Դերասաններն ու հանդիսականները ջերմորեն ողջունում են իրենց ականավոր հայրենակցին:

Հայրենիք իր երկորոր և ցավոք վերջին այցելության ընթացքում Դ. Ղազարյանն ունկնդրում է Ղարաբաղում գործող դպրոցական երգչախմբերի ելույթները, մերողական բազմակողմանի օժանդակություն ցույց տալիս խմբավարներին: Ղավարտ այցելության՝ նա գրում է «Ինչ սիրուն է Ղարաբաղը» երգը՝ ասես վերջին անգամ այս կերպ հավաստելով իր որդիական սերն ու նվիրումը հայրենի եզրքի նկատմամբ...

Հայրենի Շուշի Դանիել Ղազարյանը վերջնականապես վերադարձավ ծիշտ տասը տարի առաջ, վերադարձավ՝ այլևս երբեք չհեռանալու համար...

1997-ին՝ շուրջ չորս տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո, Շուշիում դպրոցականների առջև իր դրաներն է բացում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առայժմ միակ երաժշտական միջնակարգ մասնագիտական գիշերօթիկ դպրոցը: Կրթօջախը, որտեղ այսօր ուսանում են շուրջ 100 շնորհալի պատանիներ ու աղջիկներ, որտեղ հաջողությամբ գործում են փողային նվազախումբն ու երգչախումբը, իր հիմնադրման օրվանից կրում է Դանիել Ղազարյանի անունը:

Եվ վստահաբար կարող ենք ասել, որ Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոցում այսօր սովորում են և ապագայում կուսանեն բազմաթիվ երեխաներ, ովքեր, որպես երաժշտ ծևավորվելով Շուշիում, հետագայում իրենց ականավոր հայրենակից Դ. Ղազարյանի նման ծանրակշիռ ավանդ կրերեն հայ երաժշտարվեստի գարգացմանը: